



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

Ժե ճարի - ՅՈՒՆԻՈՒՐ 1939 15^{me} Année - Janvier 1939

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Բայ Դուռը (Յ. Ն. Ղ.)	1
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Համբարձեան շնորհքը (Թրգմ. Ն. Մ.)	3
» » Եռանդուն ըլլալու յորդոր մը (Թրգմ. Վեր. Մովսէս Յակոբեան)	4
» » Աղօթք (Վահրամ Սալիպեան)	6
» » Քրիստոնեան դրամը ինչպէս գործածելու է (Վեր. Եղոյեան)	7
ԾՆՆԴԵԱՆ ՅԵՏԱԲԶԱՅԱԿՅԱՆ — Ուրախութեան մեծ աւերակը (Ա. Յ. Տէր-Յովհաննէսեան)	9
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Խորհուրդները (Scofieldէն)	10
ՃԷՅՄՍ ՀԸՏՍԸՆ ԹԷՅԼԸՐ — Մանկութեան օրերը (Թրգմ. Ն. Մ.)	11
ՊԱՏԱՆԵԱՅ — Չկայ բան մը որ պիտի չյայտնուի	14
ՄԱՆԿԱՆՅ — Աստուծոյ կերպերը (Թրգմ. Յ. Ք.)	15
ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ	16
ԵՐԳ — Երջանիկ ապագայ (Թրգմ. Յ. Ն. Ղ.)	Կողքին Յոր Էջին վրայ

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնութիւն ճշմարիտ «Բանին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յերանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական մարմնին անդասներն են
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՏԱՔԵԱՆ
ԲՐՈՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՔՐԱՀԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:
Յօդուածաշարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ՎԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուզան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապու համար:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տղար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ


Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Արթնցի՛ր դռան
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մոռնելու խոստումնքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Եբր. Ժ. 37

ԺԵ. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ 1939

ԹԻԻ 1

ԲԱՅ ԴՈՒՌԸ



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա քու առջեւդ բացուած դուռ մը դրի, զոր մէկը չկրնար գոցել:

(Յայտ. Գ. 8)

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ առթիւ կրկին կ'ողջունենք
մեզ սիրելի ընտանիքը Բանբերի, կը բարեւենք
նաեւ զանոնք, որ այս օրուրնէ սկսեալ որպէս
նոր բաժանորդ և նոր անդամ մուտ կը գտնեն
մեր ընտանիքին մէջ:

Սիրելիներս, անցեալտարիներու մէջ մէկ սիրտ,
մէկ խորհուրդ, նոյն զգացումներով տողորուած
քաղցինք, միասին հետեւեցանք այն ճամբա-
ներէն, որոնց մէջէն Տէրը ուզեց առաջնորդել
մեզի: Թերթ մըն էր անխօս, բայց պինդ կապը
եղաւ անքակտելի, որով խնդրեցինք Տէրոյ մէ և
խօսեցանք Անոր, խօսեցանք նաեւ իրարու հետ,
զօրացանք, զօրացուցինք, քաջալերուեցանք,
քաջալերեցինք, լուսաւորուեցանք, լուսաւորե-
ցինք՝ վերջապէս Աստուծոյ թագաւորութեան
զործին մէջ քայլ մը աւելի յառաջդիմեցինք և
Տէրոյ ձեռքը մեր վրայ եղաւ: Ասոր վկաներն
ենք մենք այսօր:

Սակայն հոգեւոր կեանքը ծայր չունի, որքան
որ Տէրը մեզի ժամանակ պարգեւէ, ատիկա
պատեհութիւն մըն է շահագործելու և Աստուծոյ
զիտութեան խորերը թափանցելու և ճանչնալու
աւելի մօտէն զԱյն, որ զմեզ սիրեց և մեզի
համար Իր կեանքը տուաւ:

Նոր տարին կեանքի անկիւնադարձ մըն է,
ու այս անկիւնադարձին առջեւ կ'արժէ որ կրկին
հաւաքուինք Աստուծոյ խօսքին շուրջը, նորին
համար ուղղութիւն առնելու:

1939ի համար Տէրոյ մէ մեզի կը մատուցուի
հետեւեալ պատգամը. «Ահա քու առջեւդ բաց-
ուած դուռ մը դրի, զոր մէկը չկրնար գոցել»:

Խիստ արժէքաւոր և հեղինակաւոր խօսք
մըն է այս և մեծ առանձնաշնորհներու դուռ կը
բանայ մեզի որ նաեւ հեղինակութիւն ալ կուտայ:
Անիկա այնքան մեծ արժէք ցոյց կուտայ, որքան
մեծ է խօսողը:

Համար մը վերը կը տեսնենք թէ խօսողը
«Ճշմարիտն է, որ Դաւիթի բանալին ունի»: (Տե՛ս
խօսքին սկզբնաւորութիւնը Եսայ. ԻԲ 22ի մէջ և
կարդա 20—24), այսինքն թագաւորական իշխա-
նութիւն ունի, որ կը հրամայէ, և չկայ անոր
հակառակ հրաման արձակող ոեւէ մէկը:

Այսօր ուրեմն մեզի համար ալ սիրելիներ,
թագաւորական հրովարտակը ստորագրուեցաւ և
մեր առջեւ 1939ի բացուած դուռը զրուեցաւ:
Շատեր այս դուռը չտեսած անցան յաւիտենա-
կանութեան, անոնց մէջ կային Բանբերի ընտա-

նիքէն ալ ոմանք: Ուրիշներ ճիշդ այս դրան առջեւ կայնած պահերուն զայն գոց գտան, և յաւիտենական հանգստեան մտան: Մեր առջեւը բաց է այդ դուռը: Մտնենք անոր մէջ: Անկէ ներս մեծ արտօնութիւններ և ասպարէզներ կան:

Ասպարէզ ինքնաճանաչութեան, քանզի ամեն տարեգլխի ընդհանրապէս կեանքի և գործերու հաշուեյարդար մը կ'ըլլայ: Այս հաշուեյարդարին ալ ընդհանրապէս ներհայեցողութիւնը կ'ընկերանայ: Ներհայեցողութիւնը ինքնաճանաչութիւն միակ միջոցն է: Մեզմէ ոմանք թերեւս միայն տարուան սկիզբը այսպիսի ներհայեցողական պատեհութիւններ կ'ունենան, ոմանքս ալ տարուան ընթացքին յաճախ և ամեն օր ժամանակ կը գտնենք այս կէտին: Որքան շատ գտնենք ատեն, որքան լուրջ ներհայեցողութիւն ունենանք, այնքան աւելի խորէն կը ճանչնանք ինքզինքնիս, մեր տկարութիւնը, մեր թշուառութիւնը և մեր անկարողութիւնը. կը տեսնենք նաեւ մեր բարձր կոչումը, որուն առջեւ յաճախ ապիկար գտնուած ենք, սակայն կը տեսնենք նոյնպէս օգնող կենդանի ձեռքը և մինչ զիտակից կ'ըլլանք այս երեք կէտերուն, կը հաւաքենք ինքզինքնիս, կ'ոգեւորուինք և մեր տկարութիւնները Անոր վրայ ձգելով կը հագուինք զԱյն, զօրանալով Անկէ, որ կարենանք կրկին մեր պատնէշին վրայ կանգնիլ: Հոգեւոր կեանքի ամենակարեւոր գաղտնիքներէն մին, ինքնաճանաչութիւնն է, զոր կրնանք Ս. Հոգիին միջոցաւ առաջնորդուած ներհայեցողութեամբ կատարել: Տէրը ասոր համար մեզի դուռ մը բացաւ նոր տարիով, շահագործենք այդ պատեհութիւնը ինքզինքնիս ճանչնալու:

Ասպարէզ Բրիստոսը ճանչնալու. — Սակայն ինչպէ՞ս պիտի ճանչնանք ինքզինքնիս եթէ մեր առջեւը օրինակ մը չունենանք: Նախկին ժամանակներու մէջ, հեթանոս աշխարհը խիստ շատ ջանաց. այն ատեն և ներկայիս ալ Բրիստոսը չճանչցողներ մեծ զին կը վճարեն ինքնաճանաչման. բայց չեն հասնիր դրական եզրակացութեան, կը շեղին, քանզի անոնք ալ մեզի պէս միայն ապիկարութիւն կը տեսնեն իրենց անձերուն մէջ, եւ չունին իրենց առջեւը Հայելին — Բրիստոսը զոր մենք ունինք:

Ուրեմն Բրիստոսը ճանչնալն է որ մեր մէջ դրական անձնաճանաչման կ'առաջնորդէ: Անցեալ տարիներու մէջ զայս շեշտեցինք, կը շեշտենք և պիտի շեշտենք, քանզի հոգեւոր կեանքի միակ պայմանը Բրիստոսը ճանչնալն է: Ան որ

թագաւորը կը ճանչնայ Իր բոլոր գեղեցկութեանը մէջ, ինքզինք ճանչնալու կ'սկսի: Յոր ճանչցաւ զԱյն, Դիւ. ԽԲ 5, 6 և հողի ու մոխիւրի վրայ նստաւ: Եսայի ճանչցաւ զԱյն, Դիւ. 2 1—5, և աղաղակեց. Վա՛յ ինձի, ահա կը կորսուիմ: Այս երկճանաչումէն յետոյ է որ երկու Աստուծոյ մարդիկն ալ փոխանակ իրենց մարդկային ապականութեան մէջ ընկղմելու, նոր տեսիլք ունեցան նոր խոյանքներու համար: Այդ խոնարհեցնող ինքնաճանաչումը զանոնք Աստուծոյ ձեռքը՝ զործածելի ըլլալու վիճակին մէջ դրաւ: Մին իր բարեխօսական և քահանայական գործին սկսաւ, միւսը մարգարէութեան պաշտօնին ձեռնադրուեցաւ: Որքա՛ն զուգընթաց կ'երթան այս ճանաչումները, անոնք մի՛շտ ալ պէտք է զուգընթաց երթան, որպէս զի մենք արժէք ունենանք և

ինքզինքնիս արժեցնելը: Ճիշդ դիրքի վրայ կեցողին միակ հոգն է այս: Յոր մոռցաւ իր քիչ մը առաջ ըսածը: Ելաւ և աղօթեց իր բարեկամներուն համար: Եսայի Աստուծոյ արգարութեան ու փրկարար սիրոյն զանգը հնչեցուց: Առաքեալներու բերանները բացուեցան և փրկութեան աւետարանի քաղցր շունչը յայտնի եղաւ:

Ա՛հ, քանինե՛ր այս ճանաչումներու առջեւ գտած են իրենց կոչումը և Աստուծոյ թագաւորութեան մէջ իրենց դիրքը բռնած են, ինքզինքնին արժեցուցած են:

Հին ուխտէն, նոր ուխտէն, Միջին դարէն, նոր դարէն, եկեղեցական կարգէն, միսիոնարական շարքէն կը ճանչնանք խիստ մեծ բազմութիւն մը, որոնք այս ճանաչումներով արժեցուցին ինքզինքնին, նոր տեսիլքներով հետեւեցան Փրկչին քայլերուն, Անոր պէս սիրելով, աղօթելով, ծախք ընելով և ծախք ըլլալով Աստուծոյ թագաւորութեան համար, նոյնիսկ մեռնելով, որպէսզի ուրիշներ ապրին:

Եղբայրնե՛ր, 1939ի Ա. առաւօտը պարզուեցաւ: Մեր առջեւ բացուած դուռ մը դրուեցաւ զմեզ շատ սիրող, մեր երջանկութեան համար դուրգուրացող Հօրն ու Վեհապետին ձեռքով: Ներս մտնենք անոր սեմէն օրհնութեամբ և ժամանակը ծախու առածի պէս զայն լման օգտագործենք վերոյիշեալ տեսակէտներով:

Հաւատարիմ է Ան որ ձեզ կանչեց, ու պիտի կատարէ ալ:



ՀԱՄԱՐԵՐՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀՔԸ

Ձեր քաղցրութիւնը ամէն մարդոց
թող յայտնի ըլլայ: Փիւ. Դ 5

Տէրոջը ուրախութեանը կ'ընկերանայ նաև քաղցրութեան շնորհքը: Այն անձը որուն հոգին ուրախ վստահութեամբ շրջապատուած է, այն անհատը որ իր պարագաներուն վրայ յաղթանակ կը տանի, երբէք խոժոռ կամ նեղսիրտ չգտնուիր իր ընկերներուն հանդէպ: Ուր որ հոգեւոր ուրախութիւն չկայ, մարդուն սիրտը հակամէտ է կարծրանալու: Տխրութիւնը կեանքը կը կարծրացնէ ու անզգայութեան կը մատնէ: Երբ մեր սիրտը պաղ է, անխորհուրդ ու յամառ վերաբերում ցոյց կուտանք ուրիշներու: Ան որ հոգեւորապէս յոռետես է, փափկութենէ զուրկ է ու մեղմիւ չի դպչիր ուրիշներու: Հոգեւոր ուրախութիւնը մարդը կարող կ'ընէ իր եղբոր տեսակէտը հասկնալու: Տէրոջմով ուրախացող անձը կրնայ ուրիշներուն սիրտերուն գաղտնիքները հասկնալ, հետեւաբար քաղցր է:

Քաղցրութեան շնորհքը Սուրբ Գիրքին մէջ երևելի տեղ մը կը գրուէ, սակայն երբեմն շատ սխալ կը մեկնուի: Ճշմարիտ քաղցրութիւնը տկարութեան արդիւնքը չէ, այլ զօրութեան ազդեցութիւնը: Տկարութիւնը անկարող է ու իր բազմաթիւ սխալներով շատ ցաւ կը պատճառէ: Տկար կամքով ու զողոթնուն ձեռքերով վիրաբոյժ մը չկրնար փափկութեամբ վերաբերիլ իր հիւանդներուն հետ: Անդիմադրելի կամքով ու երկաթեայ ջիղերով վիրաբոյժն է որ կարող է հանգարտ ձեռքով ու ամենայն փափկութեամբ դպչիլ վէրքին: Տկար ձեռք մը չարչարանք կը պատճառէ հիւանդին: Զօրաւոր ձեռքը փափկութեամբ կը բժշկէ հիւանդը: Նոյնը ճշմարիտ է նաև բարձրագոյն նկարագրի մը համար: Թուլամորթ մարդիկ չեն որ ազնիւ ասպետներ կ'ըլլան: Ազնիւ արիւնին մէջ երկաթ գտնուելու է: Այսպէս ալ երբ մէկի մը նկարագրին մէջ երկաթ չկայ, անոր զգայնական դրութեան արիւնը նոսր ու անբաւական է: Պօղոս Առաքեալ, որ իր աշակերտները կը խրատէ քաղցր ըլլալու, զանոնք կը յորդորէ նաև «զօրաւոր» ըլլալու: Երբ զօրաւոր չենք, վստահ կայ անգութ ըլլալու, սակայն երբ զօրաւոր ենք, աւելի ազնիւ վերաբերում

ցոյց կուտանք տկարներու: Անհաստատ գաղափարի տէր մարդիկ առ հասարակ չեն համբերեր ուրիշներու: Հաստատ համոզման տէր մարդիկ աւելի ներսդ ու օգնող կ'ըլլան ուրիշներու:

Քաղցրութիւնը նաև բանականութիւն կը գործածէ: Ուրիշներու պահանջները նկատի կ'առնէ: Իր անձնական իրաւունքները ճշդիւ իրականացնելու ետեւէ չըլլար: Ճշմարիտ է թէ մարդու մը ամենաբարձր իրաւունքը իր իրաւունքը չի պահանջելու իրաւունքն է: Մարդիկ երբեմն այս ճշմարտութիւնը մոռնալով իրենց հոգւոյն ամենէն ազնիւ առանձնաշնորհումը կը կորսնցնեն: Ինչպէս ասկէ առաջ տեսանք Փիւ. Թուղթին մէջ, մեր Տէրը Յիսուս կատարելապէս իրաւունք ունէր Աստուծոյ հաւասար ըլլալու, սակայն Անիկա յափշտակութիւն մը չի սեպեց Անոր հաւասար ըլլալը: Ինքզինքը ունայնացնելով իր այս իրաւունքը մէկդի դրաւ: Այսպէս կ'ընեն նաև Անոր ճշմարիտ աշակերտները: Անոնք յաճախ իրենց ամենաքաղցր իրաւունքը կը փնտոեն իրենց իրաւունքներէն հրաժարելու մէջ: Գլխաւոր տեղերը ուրիշներու կուտան և մեծ հաճոյքով աւելի ցած տեղեր կը գրաւեն: Քաղցրութեան կեանքի ամենէն փայլուն յատկանիշներէն մին է այս: Քաղցրութիւնը զօրութիւն ունի ուրիշներուն իրաւունքները զգալու և զանոնք իր իրաւունքներէն վեր դասելու: Տկար ու խոտորեալ հոգիներ միայն իրենց իրաւունքները պահելով փառաւորուած կ'զգան, հոգ չէ թէ այդ կերպով ուրիշները ցածցնեն: Մեր իրաւունքները միայն այն ատեն զովելի են, երբ անոնց մէջ մեր եղբայրներուն իրաւունքներուն ցոլացումը տեսնուի:

Քաղցրութեան ուրիշ մէկ յատկանիշն է բարութիւն: Կարելի է մեր եղբոր իրաւունքը ճանչնալ ու յարգել, սակայն այսու հանդերձ անուշադիր ըլլալ: Կրնանք անողորմ ու խոժոռ կերպով և քրթմնջելով մեր իրաւունքներէն հրաժարիլ: Յիսուսի ցոյց տուած քաղցրութիւնը այսպէս չէր: Գրիստոնէական քաղցրութիւնը խոժոռ դէմք ու չարագուշակ քրթմնջումներ չի պարունակեր: Տէրոջմով ուրախ եղողին հոգին ինչպէս կրնայ քաղցր ըլլալ: Կարելի է որ մէկի մը սիրտը սրբազան ուրախութեամբ լեցուած ըլլայ, բայց դէմքը խոժոռ: Ճշմարիտ քաղցրութիւնը բարի ու զուարթ կ'ըլլայ և թեթեւ հոգի մը կ'ունենայ Տէրոջմով:

Արդ Առաքեալը խիստ ուշագրաւ յաւելում մը կ'ընէ իր խրատին վրայ: «Տէրը մօտ է»: Ուրախութիւն ու քաղցրութիւն յանձնարարելէն

ճութենէն որ կը մերժէ ձեռնառու ըլլալ կրօնական գործերու եթէ ընելիք մը կայ գործիքին մասին, որով գործը յառաջ կը տարուի: Այդ հաշիւով լաւ է որ բան մը չընենք երբեք: Դիմադրէ այդ զգացումդ, ընթերցող, եթէ դուն ատով փորձուած ես: Ատիկա Սատանային մէկ հնարքն է: Լաւ է գործել տկար գործիքներով քան որ բնաւ չգործել: Ինչ որ ալ ըլլան պարագաները, ջանա որ բան մը ընես Աստուծոյ եւ քրիստոսի համար, — բան մը՝ տգիտութեան եւ մեղքի դէմ: Տո՛ւր, հաւաքէ՛, սորվեցո՛ւր, յորդորէ՛, այցելէ՛, արթնի՛: Ինչպէս Աստուած կը կարողացնէ քեզ: Միայն միտքդ դիւր թէ ամեն մարդ կրնայ բան մը ընել, ու որոշէ որ, ինչ ալ ըլլայ, դուն ինքդ բան մը պիտի ընես: Եթէ միայն մէկ տաղանդ մը ունիս, մի՛ թաղեր նոյնը գետնին մէջ: Զանա ապրիլ այնպէս՝ որ քու բացակայութիւնդ զգացուի: Տասներկու ժամերու մէջ ընելու շատ աւելի բաներ կան քան մեզմէ շատերս երբեք ըրած ենք մեր կեանքի ու եւ է մէկ օրուան մէջ:

Մտածէ պատուական հոգիներու մասին որոնք կը կորսուին մինչ դուն կը քնանաս: Քու ներքին պայքարներուդ թոյլ տուր, եթէ կ'ուզես: Քու անձնական զգացումներդ շարունակէ անդամազննել, եւ շարունակէ յառիւ քու անձնական ապականութիւններուդ վրայ, եթէ այդպէս որոշած ես: Բայց յիշէ որ այդ ամբողջ ժամանակը հոգիներ դէպի դժոխք կ'երթան, եւ դուն կրնաս բան մը ընել փրկելու զանոնք գործելով, տալով, գրելով, խնդրելով եւ աղօթելով: Ո՛հ, արթնցիր, խանդավառու եւ ապաշխարէ:

Մտածէ ժամանակի կարճութեան վրայով: Դուն շուտով պիտի անցնիս երթաս: Ողորմութեան գործերուն համար պատեհութիւն մը պիտի չունենաս ուրիշ աշխարհի մէջ: Երկնից մէջ տղէտ մարդիկներ պիտի չգտնուին զանոնք հրահանգելու եւ ոչ ալ դարձի չեկող մեղաւորներ: Ետ կոչելու: Ինչ որ դուն կ'ընես, պէտք է որ զայն հիմա ընես: Ո՛հ, ե՛րբ պիտի սկսիս: Արթնցի՛ր, խանդավառուէ՛, եւ ապաշխարէ:

Մտածէ Սատանային՝ եւ իր փնտնէր ընելու եռանդին վրայ: Ծեր Պրորոքարտի հետեւեալ խօսքը խիստ լուրջ է. «Սատանան պիտի ելլէ դատաստանին կարգ մը մարդոց դէմ այն վերջին օրը, որովհետեւ ինք ցուցուցած էր աւելի եռանդ հոգիներ կործանելու, քան թէ անոնք ցուցուցած են, այն հոգիները փրկելու: Արթնցի՛ր, խանդավառուէ՛, եւ ապաշխարէ՛»:

Մտածէ քու փրկչիդ՝ եւ Աստուծոյ քեզի համար ունեցած բոլոր եռանդին վրայ: Մտածէ Աստուծոյ

վրայ Գեթսեմանիին մէջ՝ եւ Դողմթայի վրայ՝ ուր Անիկա իր արիւնը թափեց մեղաւորներու համար: Մտածէ՛ Աստուծոյ կեանքին՝ եւ մահուան վրայ, — Յիսուս Քրիստոսի չարչարանքները եւ ըրածները: Անիկա քեզի համար ըրած է այս ամենը: Դո՛ւն ի՛նչ կ'ընես իրեն համար: Ո՛հ, որոշում ըրէ թէ ասկէ յետոյ քրիստոսի համար ծախք պիտի ընես եւ ծախք պիտի ըլլաս: Արթնցի՛ր, խանդավառուէ՛, եւ ապաշխարէ՛:

Հիմա թոյլ տուէք ինծի որ ըսեմ նաեւ բան մը քաջալերելու այս էջերու բոլոր ընթերցողները որոնք եռանդուն քրիստոնեաներ են:

Ընելիք միայն մէկ խնդիրք մ'ունիմ ձեզի, եւ ատիկա այս է որ դուք յարատեւէք: Կ'աղաչեմ ձեզի որ ամուր բռնէք ձեր եռանդը, ու երբեք չթողուք որ ան մարի: Կ'աղաչեմ ձեզի որ ձեր առաջուան գործերը բնաւ չթողուք, բնաւ երբեք չձգէք ձեր առաջուան սէրը, ձեր վրայով երբեք թող չըսուի թէ ձեր առաջուան բաները աւելի լաւ էին քան որ ձեր վերջինները: Զգուշացէք որ չպաղիք: Եթէ միայն ծոյլ ըլլաք եւ հանդարտ՝ անշարժ՝ եւ լուռ կենաք, ահա այն ատեն դուք պիտի կորսնցնէք ձեր բոլոր տաքութիւնը: Դուք շուտով պիտի ըլլաք ուրիշ մարդ մը հիմակուայ ձեր ինչ ըլլալէն տարբեր: Ո՛հ, ընթերցող, մի՛ խորհիր թէ ասիկա անպէտ յորդոր մըն է:

Թերեւս շատ ճշմարիտ է թէ իմաստուն երիտասարդ հաւատացեալներ շատ քիչ են: Սակայն ոչ պակաս ճշմարիտ է թէ եռանդուն վաղեմի հաւատացեալներ նոյնպէս շատ քիչ են: Բնաւ թոյլ մի՛ տար որ քեզի դայ այն խորհուրդը թէ կրնաս խիստ շատ ըրած ըլլալ, թէ չափէն աւելի ծախսած՝ եւ ծախսուած կրնաս ըլլալ Քրիստոսի գործին համար: Մէկ մարդու մը տեղ որ շատ բաներ կ'ընէ, եւ կրնամ ցուցունել քեզի հազար մարդիկ որոնք բաւական բան իսկ չեն ըներ: Ընդհակառակը՝ խորհէ թէ գիշերը կուգայ, երբ ոչ ոք կրնայ գործել, եւ տալ, հաւաքել, սորվեցնել, այցելել, գործել, աղօթել, այնպէս՝ ինչպէս ըրած պիտի ըլլայիք եթէ վերջին պատեհութիւնդ եղած ըլլար: Սրտիդ վրայ թող ծանրանայ այն ազնուամիտ ձանսէնիսթին խօսքերը — երբ անոր ըսուեցաւ թէ ինք պէտք է հանգչի ատեն մը — անիկա ալ ըսաւ, «Ինչո՞ւ համար պիտի հանգչինք, միթէ չունի՞նք ամբողջ յաւիտենականութիւն մը հանգչելու համար»:


Մի՛ վախճար մարդոց նախատիքներէն: Մի՛ նուաղիր, եթէ երբեմն կը զեղծուիս: Ուշա-

դրութիւն մի՛ տար եթէ երբեմն քեզ կոչեն մոլեռաճող, մոլեխանդ, կրօնամոլ, խելագար մարդ, և յիմար: Այս անուններուն մէջ անշնորհ բան մը չկայ: Այս անունները յաճախ տրուած են ամենալաւ՝ և ամենաիմաստուն մարդոց: Եթէ դուն միայն խանդավառ պիտի ըլլաս երբ դուն կը փառաբանուիս ատոր համար, — եթէ քու եռանդիդ անիւները պէտք է որ իւղոտուին աշխարհի գովասանքով կամ յանձնարարութեամբ՝ այն ատեն քու եռանդդ կարճատեւ պիտի ըլլայ: Հոգ մի՛ ընէր մարդոց գովասանքներուն կամ խոստովանելու անհաւատ չափը: Խնամք տանելու արժանի միայն մէկ բան մը կայ, և ատ է Աստուծոյ գովեստը: Մեր գործերուն մասին հարցնելու արժանի մի միայն մէկ հարցում կայ, այն է, «Մեր գործերը ինչպէ՞ս պիտի երեւնան դատաստանին օրը»: Այս խօսքերը լրջօրէն նկատի առ:

Եթէ դուն տակաւին խանդավառ մէկը չես, կ'աղօթեմ որ Աստուած քեզ խանդավառէ: Եթէ դուն խանդավառ ես, կ'աղօթեմ որ քու եռանդդ ա՛լ աւելի աճի և աւելնայ մինչեւ քու կեանքիդ վերջը:

Թրգմ. Անգլ. է Վեր. ՄՈՎՍԷՍ ՅԱԿՈԲԵԱՆ

Ֆրէզնօ, Գալիֆորնիա



ԱՂՕԹՔ

Պատանեկութեանս օրերուն ծնողքս մեզ, իրենց զաւակները, իրենց հետ միասին եկեղեցի կը տանէին: Այդ պաշտամունքներու ընթացքին յաճախ երգուած երգի մը առաջին խօսքերը մինչեւ այսօր յիշողութեանս մէջ վառ պահուած կը մնան: Պատանի տարիքիս մէջ չէի կրնար անշուշտ ըմբռնել ատոնց բուն նշանակութիւնը, բայց սա տառապալից աշխարհի մէջ քանի ապրեր ու կեանքի փորձառութիւն ունեցեր եմ, այնքան աւելի նշանակալից դարձած են անոնք ինծի համար: Այդպէս համոզուած եմ թէ այդ խօսքերուն հեղինակը իր անձնական փորձառութեան յենելով ու Ս. Հոգիէն ներշնչեալ՝ գրի առած է զանոնք:

«Տուա տըր Գանըն Նէֆէսի». հոգիին շունչը աղօթքն է: Աղօթքը, այո, հոգիին շունչն է ամէն հաւատացեալի համար: Անիկա այնքան կարեւոր է հոգւոյն համար, որքան մաքուր օդը թոքերուն համար: Այն մարդիկը, որոնք աղօթքի հոգիին թեւերովը վերերը՝ Աստուծոյ ջինջ ու մաքուր

մթնոլորտին մէջ սաւառնիլ չեն գիտեր, հապա մի միայն երկրաքարշ բաներով իրենց միտքն ու հոգին կը լեցնեն, մահացու թոյնով իրենց հոգին կը թունաւորեն ու թոյն կ'արտաքսեն իրենց կեանքէն:

Աղօթքը մեզ Աստուծոյ կը մօտեցնէ ու զԱստուած մեզի: Աղօթքը Ս. Հոգիին առջեւ սրտին դուռը կը բանայ: Աղօթքը մարդուն հոգիին թոխչք կուտայ, որ մինչեւ Շնորհաց գահուն առջեւ կը բարձրանայ ու Աստուծոյ Հոգին մարդուն հոգիին հետ կը միացնէ երկրի վրայ: Աղօթքը զօրութեանց «ակն ու աղբիւր»ին հետ սերտ հաղորդակցութեանց մէջ կը պահէ աղօթողը:

Աղօթքը մարդուն մտքէն ու սրաէն չար խորհուրդները կը վանէ: Սիրտը իր ախտերէն — նախանձէն, հպարտութենէն, ատելութենէն, բարկութենէն, թշնամութենէն, անբարտաւանութենէն, պղծութենէն և միւս բոլոր ախտերէն կը բուժէ:

Աղօթքը, զոր Ս. Հոգւով կ'ըլլայ, միտքը վեհ ու գեղեցիկ խորհուրդներով կը ներշնչէ, սիրտը կ'ազնուացնէ և հոգին սրբութեամբ կը զարդարէ:

Երբ ուրիշ կարելի ամէն միջոցներ ապարդիւն մնան նեղութեան ատեն մեզի օգնելու, մեզ զօրացնելու, մխիթարելու, մեր ճամբան մեզի ցոյց տալու, աղօթքը կ'ըլլայ այն միակ ու կենդանի միջոցը, որով մեր տկարացած հոգին երկնային զօրութիւն կ'զգենու, սիրտը կը զօտեպնդուի, միտքը անդորրութիւն ու խաղաղութիւն կը գտնէ ու մարմինն ալ հանգստութիւն: Մեր հոգերը կը փարատուին, մեր վախերը կ'անհետին, մեր ցաւերը կը բուժուին, մեր սիրտերն ալ հրճուանքով կը լեցուին:

Մեծագոյն պատերազմը, զոր մարդ կը մղէ, արիւնի ու մարմինի հետ չէ, հապա «իշխանութիւններու ու պետութիւններու հետ և այս խաւար աշխարհին իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջ եղող չար ոգիներուն հետ»: Ուստի պողպատէ սուրն ու հուժկու բազուկը, երկաթեայ կամքն ու ստեղծագործ միտքը անգոր կը մնան հասարակաց մեծ թշնամիին առջեւ: Ասոր համար է որ Առաքեալը կը յորդորէ մեր վրայ առնել Աստուծոյ բոլոր սպառազինութիւնը ու կը պատուիրէ որ ամէն ատեն աղօթք ընենք հոգիով ու այս բանին վրայ հսկենք կատարեալ յարատեւութեամբ, որպէսզի կարող ըլլանք չարութեան օրը դէմ դնել ու հաստատուն կայնիլ:

Մեր աղօթքները Աստուծոյ տրուած պատե-

հուլիսյաններ են աշխարհի մէջ իր փրկարար զօրութիւնը ի յայտ բերելու համար:

Եթէ մեր կողմէն չկայ յօժարութիւն Աստուծոյ՝ խնդրելու և կամեցողութիւն՝ հնազանդելու, Աստուած անկարող կը մնայ մեզի բան մը տալու. մեր մէջ ու մեր միջոցաւ բան մը ընելու:

Ուստի աղօթքը կ'ենթադրէ թէ Աստուած մը կայ զոր յօժարակամ է խնդրողին տալու, եւ երկրորդ՝ թէ հաւատքով խնդրող մը կայ զոր յօժար է Աստուծոյ կամքին հնազանդելու:

Մեծագոյն բանը զոր մարդ մը կարող է ընել, աղօթելն է: Մեծ են այն մարդիկը, որոնք Սբ. Հոգիով աղօթել գիտեն:

Սա դժնդակ օրերուն մէջ ինչ որ աշխարհ կը կարօտի, այն մարդոց է, որոնք մարդիկ ու զԱստուծոյ իրարու մօտ կը բերեն: Անոնց, որոնք այլոց ցաւերով, վիշտերով ու մեղքերովը բեռնաւորուած Շնորհաց Գահուն առջեւ կը բարձրանան ու այդ սրբարանէն երկնային շնորհքներով ու օրհնութիւններով լի ու Սբ. Հոգիով առլցուն՝ մարդոց կը վերադառնան:

Ուստի լծուէ՛ այս գործին, աշխարհն ու Տէրը քեզի կ'սպասեն, քեզի կը կարօտին:

Արդարեւ «Արդարին ջերմեռանդ աղօթքը շատ ազդեցութիւն ունի»:

ՎԱՀՐԱՍ՝ ՍԱԼԻՊԵԱՆ

Հազիր, Լիբանան

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԴՐԱՄԸ ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ Է

Ղուկ. 16 : 1—13

(Վեր. Ա. Զ. Եղլյեանի քարոզէն, 16 Մայիս 1937)
Բէսէտինայի եղբայրութեան
ամսականին խօսուած

Ինչպէս որ կը տեսնէք, մի քանի շաբաթէ ի վեր գործնական նիւթերու վրայ կը խօսիմ: Այսօր ալ այդպէս պիտի ընեմ: Նիւթս, «դրամը (մամօնան) ինչպէս գործածել» է: «Մամօնա» Արամերէն բառ մըն է: Մեր Տէրը երբեմն այս լեզուով կը խօսէր: Կ'ըսուէր նոյն իսկ թէ Մատթէոսի Աւետարանը նախ Արամերէն լեզուով գրուեցաւ և յետոյ, կամ Մատթէոս ինքը, կամ ուրիշները, Յունարէնի վերածեցին:

Մեզմէ ամէն մէկը, իր կարողութեանը չա-

փով ունի դրամ: Ոմանք 10.000, ոմանք 100 կամ 1 տօլար: Ինչպէ՞ս գործածելու ենք զայդ: Որչա՛փ քիչ քրիստոնեաներ, մանաւանդ այս երկրին մէջ, Տէրոջը հաճութեանը համեմատ կը գործածեն իրենց դրամը:

Ղուկ. ԺԵ 1-3 համարներուն մէջ, մեր Տէրը մաքսաւորներուն և մեղաւորներուն կը քարոզէր, երբեմն ալ անոնց հետ կ'ուտէր: Փարիսեցիները այս բանը չէին կրնար տանիլ: Վերոյիշեալ զլուխին մէջ, մեր Տէրը երեք առակներ խօսեցաւ, կորսուած դրամին, կորսուած գառնուկին և անառակ որդիին վրայ, որոնցմէ երեքն ալ կորսուածներուն համար էր: Այս կերպով Յիսուս կը հասկցնէր թէ կորսուածներէն աւելի յոյս կայ քան փարիսեցիներէն, որոնք իրենց դիրքը ապահով կը կարծէին: Ուրիշ տեղ ըսաւ, «Մեղաւորները ձեզմէ առաջ պիտի մտնեն թագաւորութեան մէջ»:

Իր աշակերտներն ալ փարիսեցիներուն պէս իրենց դիրքը ապահով կարծելնուն համար Ղուկ. 15րդ զլուխի առակները իրենց համար չառին, բայց աշակերտներուն համար ալ վտանգ կար: Այդ պատճառաւ Ղուկ. 16րդ զլուխը կը բացուի այսպէս. «Ու իր աշակերտներուն ալ ըսաւ, մարդ մը կար որ տնտես մ'ունէր» և այլն: Հետեւաբար հաւատացեալներուն համար ալ է այս առակը: Եթէ Տէրոջը տուած դրամը և ինչքը իր կամքին համեմատ չգործածենք, վտանգ կայ: Քրիստոնեաներէն շատեր կը խորհին թէ քանի որ արդար վաստակով կը շահին դրամը, իրենց ուզածին պէս ծախսելու, վախելու, բարեկամներուն հետ ալ հաճոյանալու ազատ են: Բայց կը մոռնան թէ, իրենք միայն տնտեսներ են, նաեւ կը մոռնան թէ իրենց միտքը, առողջութիւնը և վաստակն ալ Տէրոջն է, ուստի պէտք է որ, Տէրոջը ուզած կերպովը գործածեն և ծախսեն: Ծիշդ այս պատճառաւ Ղուկ. ԺԶ 11-12 համարները աշակերտներուն և բոլոր հաւատացեալներուն խօսուած են: Առաքեալն ալ կ'ըսէ. «Բան մը չբերինք այս աշխարհը, բան մըն ալ պիտի չտանինք անկէ»: Եթէ մենք հաւատարիմ չենք հոս, մեզի վստահութեանը մէջ, ո՞վ պիտի վստահի մեզի բաներ երկինքի մէջ:

Նախորդ քարոզիս մէջ ըսի թէ մենք արարած ենք և Ան Արարիչ, մենք տնտեսներ ենք: Առակը կ'ըսէ թէ այս տնտեսին մասին զանգատ եղաւ իրեն՝ որպէս թէ իր ունեցածը կը փճացնէ. «զանգատ» բառը (եւփօլօ) բառէն շինուած է որ սատանայի մէկ անունն է «Եւփօլօս»:

Այս գանգատը հաւանաբար տնտեսին թշնա-

միներէն մէկը ըրած է: Կ'երեւի թէ նա առաջ-
նակարգ հագուստ կը հագուէր, կառք, ձիեր
հեծնելով, համադամ կերակուրներով կը հաճո-
յանար: Տեսնողները նախանձելով, զանգատ
ըրին իր Տէրոջը: Թէեւ նպատակնին թշնամու-
թիւն էր, բայց ըսածնին շիտակ էր: Սատանա-
յին համար կը կարգանք թէ զանգատ (չարա-
խօսութիւն) կ'ընէ Աստուծոյ զաւակներուն հա-
մար. իր նպատակը գէշ է. բայց իր ըսածն ալ
շիտակ է. նա միշտ ստախօս չէ: Եթէ սատանան
մեր մասին Աստուծոյ առջեւ զանգատ կ'ընէ թէ
մենք Աստուծոյ դրամները շիտակ չենք գործա-
ծեր և այլն. ըսածները շիտակ չեն:

Երբեմն մարդիկ կան որ մեզ չեն սիրեր և
մեր մասին զանգատ ու բամբասանք կ'ընեն,
բայց ըսածնին ալ շիտակ կ'ըլլայ: Դուրսի մար-
դիկը երբ տեսնեն թէ Կիրակին կը գործածենք
ճիշդ իրենց պէս, կը հագուինք իրենց պէս, վա-
յելքներու ետեւէ ենք իրենց պէս, կը զանգա-
տին: Ուրեմն չի նեղուինք որ մեզ կը բամբասեն:
Եթէ շիտակ կը խօսին, ապաշխարենք և շտա-
կուինք: Եթէ մենք մեզի վստահուած դրամը և
ինչքը Տէրոջը հաճելի կերպով չգործածենք,
պիտի զրկուինք երկինքը ամէն ինչքէն:

Տնտեսը երբ հասկցաւ թէ ալ չկրնար շարու-
նակել իր պաշտօնը, խորհեցաւ թէ ինք միշտ
ճոխ և փափուկ կեանք մը ապրելու վարժուած
ըլլալով՝ եթէ պաշտօնագրկուի, չի կրնար գոր-
ծաւորի դժուար կեանքը ապրիլ: Խելացի մարդ
էր, պարտականներուն պարտքերը գեղջեց, որ-
պէսզի եթէ պաշտօնանկ ըլլայ, բարեկամներ
ունենայ, զինք տուններնին հրաւիրելու, կերցնե-
լու, խմցնելու, որպէսզի ինք նորէն շարունակէ
դիւրին ապրիլը: Երբ իր Տէրը լսեց, հաւնեցաւ
իր անձին հոգածութիւնը (խոհեմութիւնը) եւ
զովեց զինք, բայց ոչ թէ զովեց իր անխրաւու-
թիւնը: Տէրը կը զովէ զանոնք որ խելացու-
թեամբ կը վարուին, արդարութեան ճամբուն
մէջ: Ինչո՞ւ աշխարհիկ մարդիկը աւելի խելացի
ըլլան իրենց գործին մէջ, քան Աստուծոյ զա-
ւակները: Ինչո՞ւ անոնք, որոնց յոյսը միայն այս
երկրի վրայ է, այսպէս խելացի ըլլան, բարե-
կամներ շահելու խոհեմութիւնը ունենան: Տէրը
կ'ըսէ որ «Անխրաւ մամօնայէն ձեզի բարեկամներ
շահեցէք որ ձեզ յաւիտենական բնակարաններն
ընդունին»: Երբ Աստուծոյ զաւակի մը ոյժը,
առողջութիւնը և ունեւորութիւնը պակսի, անոր
համար չէ՞ որ Աստուծոյ կամքին համեմատ
գործածած չէ սոյն բաները, զորոնք տուած է

իրեն: Ուրեմն Տէրն ալ կամաց կամաց ետ կ'առ-
նէ ինչ որ տուած էր:

Մեր առողջութիւնը երբեմն կը քայքայուի
և Տէրը չվերահաստատեր, քանզի մենք չարա-
չար գործածած ենք զայն:

Սողոմոն կ'ըսէ թէ ինչ որ ձեռքդ գտնէ ընե-
լու, բոլոր ոյժովդ ըրէ, քանզի եթէ հոս չկատա-
րեցիր, հոն երկինքը չես կրնար լրացնել, ուստի
ամէն բան, մանաւանդ դրամը Տէրոջը կամքին
համեմատ գործածէ:

Եթէ այս անցաւոր օրհնութիւնները հաւա-
տարմութեամբ չգործածես, հոն ո՞վ բան մը
պիտի վստահի քեզի: Ես կը հաւատամ որ
ոմանք դրախտ պիտի երթան, բայց այս եր-
թալը իրենց մեծ բան մը պիտի չարժէ: Տէրը
կ'ըսէ, «Ձեր զանձերը վերը դիզեցէք, և այս
«մամօնայէն» բարեկամներ չիւնեցէք»: Երբ ան-
կարողութիւն, հիւանդութիւն ու չքաւորութիւն
զայ, հոգ ունենանք պատրաստ գոյք և զանձ:
Աղքատներուն համար, Տէրոջը գործին համար
տուր և մի վախնար:

Այս շաբթուան լուրերուն մէջ կարդացի որ
Մէսէչուսէթի Ծովզրիվըր ըսուած քաղաքը 70
տարեկան հայ հնակարկատ մը միայնակ, մե-
ռած է: Մի քանի օր մէկը չէ գիտցեր, վերջա-
պէս ոստիկանները իմանալով սենեակը բացեր
են, 2 տօմաթէսի սնտուկէ և խեղճ անկողինէ մը
զատ կարասի չուներ: Մտուկին մէջէն 4 նօթ
գտնուած է, որոնց արժէքն էր 14.000 տօլար.
այս մարդը խեղճ կեանք մը ապրելով անօգուտ
մէկը եղաւ:

Կալկաթա՝ Միսիոնարի մը կողմէ դիմում
կ'ըլլայ Անգլիացի հարուստի մը, օգնութեան
համար: Հարուստը իր քարտուղարին կը հրա-
մայէ 250 տօլարի չէք մը գրել, բայց տակաւին
միսիոնարին չտուած հեռագիր մը կուգայ, որ
կը գուժէր թէ միլիոնաւոր տօլարի ապրանք
փոխադրող իր նաւը Անգլիոյ ճամբուն վրայ
ընկղմած է. իր քարտուղարին կը հրամայէ
դարձեալ որ չէքը փոխէ և 4000 տօլարնոց ուրիշ
չէք մը գրէ: Միսիոնարը կը կարծէ թէ սխալե-
ցաւ 100 տօլար պիտի ըսէր, ուստի դիտողութիւն
կ'ընէ, բայց հարուստը կը կրկնէ թէ շիտակ է
և կ'ըսէ՝ թէեւ այս արկածով կորուստը պիտի
ցնցէ իր գործը, բայց աւելի լաւ է երկինքը զրկել
զանձը, քանի որ հոս կը կորսուի: Երկու ծայրեր:
Թէեւ մենք ոչ հայ հնակարկատին պէս ենք, ոչ
ալ Կալկաթայի հարուստին պէս, բայց մենք ալ
ինչ որ ունինք, ունինք ըսի, ոչ Տէրոջը տուած.

ները եւ իր դրամը ինչպէ՞ս պէտք է գործածենք: Անցեալ շաբաթ կնոջն և զաւակներուն հաշիւ մը տուի՝ խնդացին, բայց պէտք չէ խնդալ, այլ խորհիլ: Խորհեցայ որ մեր սեղանին վրայ դաւալ, պատարաքաղ և այլն որ կայ, արդեօք առանց անոնցմէ ոմանց չե՞մ կրնար կերակուրս ուտել, ինծի համար զրուած առարկաներէն երեք հատը մէկ կողմ դրի և կերակուրս կերայ: Հաշուելով գտայ որ օրը երեք անգամ գործածուելով անոնք կը կոտորին, լուսնալու ժամանակ կը տրուի և զանոնք զնելու դրամ կը ծախսուի, այսպէսով տօլարներ կրնար խնայուիլ Տէրովը դրամէն:

Երբ Պերլին կ'երթայի, ճաշարան կառքը գացի, հոգ սպասաւոր աղջիկը շատ մը դժալներ, պնակ պնակի վրայ դրած էր. աւելորդ բաներ. աղջիկը չեկած աւելորդները մէկ կողմ գատելով աղջկան ցուցուցի որ ետ տանի, խնդաց բայց առաւ ետ տարաւ: Մեր ընտանիքներուն մէջ շատ աւելորդ կորուստներ և մեր ոչինչ սեպած մսխումներ կը կատարուին, որոնք խնայուելով Տէրովը գործին մէջ օգտակարապէս կրնան գործածուիլ: Ամէն:

Ամփոփեց Յ. ԽԱՐԲՈՒԹԼԵԱՆ

Ծննդեան յետաքննագանգ

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԱՒԵՏԻՍԸ

Մեծ դէմքերն ու դէպքերը երկիրը կը յեղաշրջեն, սակայն Յիսուս Քրիստոս մեծագոյն դէմքը մարդկային սիրտն ու հոգին կը յեղաշրջէ:

Այսօր Պաղեստինի գեղեցիկ դաշտը լուսեղէն վերարկու հագած է ու անոր շինջ հորիզոնին վրայ՝ հրեշտակները մարդկութեան ուրախալի աւետիսը կ'երգեն: Աւետիս մը որ հաւատացեալին հոգին բերկրանքով կը լեցնէ ու անոր սրտին ծալքերէն գովաբանութեան սուրբ մեղեդիներ կը բարձրանան դէպի Անհունին:

Այո՛, մեծ և ուրախալի է այս աւետիսը վասնզի Աստուծոյ մարդոց մէջ յայտնուելուն աւետիսն է: Հրեշտակը ըսաւ, ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կուտամ որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ, Ղուկ. 2 : 11: Այո՛, բոլոր մարդոց համար. Եսայի կ'ըսէ «Ո՛վ բոլոր ծառուածներ ջուրերուն եկէք և ստակ չունեցողներ, եկէք, ծախու առէք ու կերէք, եկէք առանց ստակի ու առանց զնոյ գինի ու կաթ ծախու առէք և

կերէք», Եսայ. 55 : 1: Բու Փրկիչդ Իսրայէլի Սուրբն է, Եսայ. 54 : 5:

Ո՛վ կրնայ լման բացատրել նորոգուած սրտի մը երջանկութիւնը: Դաւիթ կ'ըսէ, «Բու փրկութեանդ ցնծութիւնը ինծի ետ դարձուր», Սաղ. 51 : 12:

Հրեշտակը հովիւներուն ըսաւ, Ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կուտամ. հովիւները լսեցին այս լուրը՝ հաւատացին, ելան արտոնօք Բեթլեհէմ գացին, փնտոցին Մանուկ Յիսուսը, գտան զայն՝ բոլոր հոգով երկրպագեցին անոր, Յիսուսն իրենց սրտերուն մէջ առած ետ դարձան ցնծութիւն ու փառաբանութիւն երգելով:

Անիկա ուրախալի աւետիս մ'է հովիւներուն, քեզի, ինծի և ամենուն համար վասնզի հրեշտակը ըսաւ, «Որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ»:

Անիկա ուրախալի աւետիս մ'է պատիկներուն համար: Այս մեծ տօնին ամենուն առաջին մտածումն է ամեն կարելի զնով պատիկները ուրախացնել:

1879ին Եգիպտոսի պեղումներու ատեն Ն. Բ. ի Թուականը կրող հետեւեալ գրութիւնը գտնուած է պապիրոսի վրայ: Հեռաւոր անկիւնէ մը «մարդ մը իր կնոջ կը գրէ, երբ նորածինը մանջ ըլլայ, հոգ տար, իսկ երբ աղջիկ, ծախէ զայն»:

Նմանապէս կնոջ դէրքը փոխուած է, կը տեսնենք թէ՛ մեր Տէրը ինչպէս կարեւորութիւն տուաւ կիներու: Մամարացի կնոջ հետ ունեցած խօսակցութիւնը, Յովհ. 4 : 7—25: Յիսուս և մեղաւոր կինը Սիմոն Փարիսեցւոյ տանը մէջ Ղուկ. 7 : 36—50: Յիսուս ինքզինքը ճանչցուց անոնց, ներեց, ու ազատեց զանոնք մեղքի կապանքներէն: Յիսուսի յարաբերութիւնը կը տեսնենք ընտանեկան կեանքին մէջ Մարիամին և Մարթային հետ, Ղուկ. 10 : 38—42:

Յիսուս Քրիստոս մարդկութեան ամենամեծ նուէրն է որուն մէջն է կեանքը, խաղաղութիւնը և երջանկութիւնը:

Այսօր շատեր իրենց ագամանդեայ սրտերը երկաթէ նիզերով ամուրցուցած՝ չեն ուզեր բանալ Անոր ու ընդունիլ զԱյն որպէս իրենց Տէրն ու Փրկիչը որ կարող է մեղքի ժանգոտած շղթաները քակել ու ազատութիւն պարգեւել. անոնց համար Ծնունդ չկայ:

ԱՆՆԱ Յ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ակսթա (Ճորճիա)



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Սուրբ Գրոց մէջ խորհուրդ կոչուած են այն ճշմարտութիւնները, որոնք նախապէս ծածկուած էին՝ բայց հիմա Աստուածային յայտնութեամբ յայտնուած են, բայց որոնց մէջ՝ հակառակ եղած յայտնութեան, տակաւին գերբնական տարր մը կը մնայ:

Սուրբ Գրոց մէջ ամենէն մեծ խորհուրդները 11 հատ են: Զանոնք կարգաւ և համառոտաբար տեսնենք:

1. Երկինքի Թագաւորութեան խորհուրդները. Մատթ. ԺԳ 3-50: Այս գլխուն մէջի 7 առակները մեր Տէրոջը կողմանէ «Երկինքի Թագաւորութեան խորհուրդները» կոչուած են Հ. 11: Անոնք միասնաբար առնուելով կը նկարագրեն ներկայ ժամանակաշրջանի միջոցին աշխարհի մէջ Աւետարանին ներկայութեան արդիւնքը, այսինքն — Սերմնացանութեան ժամանակաշրջանը, որ սկսաւ մեր Տէրոջ Իր անձնական պաշտօնէութեամբը, և կը վերջանայ «Հունձք»ով, Հ. 40-43: Մէկ խօսքով՝ այդ արդիւնքը որոմներու և ցորենի խառնուած աճիլն է, աղէկ ձուկերն և անշաները՝ Քրիստոնէական շրջանակին մէջ. ասիկա քրիստոնէութիւնն է: Ճշմարիտին և սուտին, ցորենին և որոմներուն, լաւին և գէշերուն խառնուրդով՝ կազմուած եկեղեցական մարմինը, արատաւորուած է ծիսապաշտութեամբ, կասկածով և աշխարհասիրութեամբ: Բայց այդ եկեղեցւոյ ծոցին մէջ Քրիստոս կը տեսնէ ճշմարիտ Թագաւորութեան ճշմարիտ զաւակները, որոնք վախճանին «արեւի պէս պիտի փայլին»: Մեծ դաշտին աշխարհի մէջ, Քրիստոս կը տեսնէ ամէն դարերու իր փրկեալները, բայց մասնաւորապէս Իրեն «պահուած Իսրայէլը», որ պիտի վերահաստատուի և օրհնուի: Այս պատճառաւ ալ Թագաւորութեան խորհուրդի ձեւին մէջ Նա կը տեսնէ եկեղեցին, Իր մարմինը և հարսը, որ զալիք Թագաւորութենէն շատ տարբեր է, և այն հարսը գտած ըլլալու ուրախութենէն Նա կը ծախէ իր ամէն ունեցածը, Բ. Կոր. Ը 9, և կը գնէ արտը, գանձը և մարգարիտը:

2. Այս ժամանակին մէջ Իսրայէլի կուրու. Թեան խորհուրդը, Հռով. ԺԱ 25: «Վասն զի չեմ ուզեր եղբայրներ, որ Հոգիտաք այս խորհուրդը, ... որ ըստ մասին կուրութիւն եղաւ Իսրայէլի, մինչեւ Ինքնանորոգութիւն լրութիւնը մտնէ»: Պէտք է զանազանել, 1. հեթանոսներուն լրութիւնը, 2. «Ազգերուն ժամանակներ»էն, Հռով. ԻԱ 24: Առաջինը կը վերաբերի եկեղեցիին և սկսաւ Պետեկոստէէն՝ իսկ երկրորդը սկսաւ Նաբուզոդոնոսորի օրով Յուդայի գերութիւնովը, որմէ ի վեր Երուսաղէմ հեթանոս գերիշխանութեան տակ է:

3. Այս ժամանակի վախճանին, մինչեւ Տէրոջը գալուստը ողջ մնացող Սուրբերուն փոխուելու խորհուրդը, Ա. Կոր. ԺԵ 51, 52, Ա. Թեա. Գ 14-17: Այս խորհուրդին կատարումով եկեղեցին պիտի յափշտակուի ամպերով Տէրոջը առջեւ ելլելու օդին մէջ, ուրկէ երբ Թագաւորը փառքով վար իջնէ, Թագաւորութեան խորհուրդը պիտի վերջանայ հունձքով:

Այս խորհուրդին կատարումով է որ. Քրիստոսի եկեղեցին իր յաղթական և յարուցեալ Տէրոջ հետ միասին պիտի երգէ մահուան վրայ իր յաղթութեան երգը, «Ո՛ւր է, ով մահ, քու խայթոցդ, ո՛ւր է, ով դերեզման, քու յաղթութիւնդ». Ա. Կոր. ԺԵ 55:

4. Նոր կտակարանի եկեղեցին խորհուրդը. Եփես. Գ. 1-11, Հռով. ԺԶ 25, Եփես. Զ 19, Կող. Գ 3: Եփես. Բ 16ի «երկուքն ալ մէկ մարմին եղած»ի ճշմարտութիւնն է այս խորհուրդը. Քրիստոսի եկեղեցին որ կազմուեցաւ հրեաներէ և հեթանոսներէ առանց խտրութեան: Հեթանոսներուն համար եղած փրկութեան խոստումը զաղտնիք մը, խորհուրդ մը չէր, Հռով. Թ 24-33, Ժ 19-21: «Աստուծոյ քով ծածկուած» խորհուրդը Աստուածային նպատակն էր հրեաներէ և հեթանոսներէ կազմուած բոլորովին նոր ստեղծագործութիւն մը ընել «եկեղեցին», որ Իր (Քրիստոսի) մարմինն է, կազմուած Սուրբ Հոգիին մկրտելովը, Ա. Կոր. ԺԲ 12, 13, և որուն մէջ հրեայի և հեթանոսի երկրաւոր զանազանութիւնը կ'անհետի. Եփես. Բ 14, 15, Կող. Գ. 10, 11: Այս խորհուրդին յայտնութիւնը, որ Քրիստոս մարգարէաբար յայտարարեց բայց չբացատրեց, Մատթ. ԺԶ 18, Պողոսի յանձնուած էր: Անոր գրութիւններուն մէջ միայն՝ կը գտնենք եկեղեցւոյ վարչապետութեան, դիրքին, քաղուածքին և ապագային վերաբերեալ յայտարարութիւններ:

5. Եկեղեցիին խորհուրդը իբր քրիստոսի

հարսը. Եփես. Ե 28-32: Եփես. Ե 31, 32 մէջըբ-
րում մըն է Ծննդ. Բ 23, 24էն և կը մերժէ այն
մեկնութիւնը թէ այս համարները կը վերաբե-
րին եկեղեցիին՝ միմիայն իբր Քրիստոսի մար-
մինը: Եւա, Ադամի մարմինէն առնուած ըլլալով
ճշարտապէս «Իր ոսկորէն ոսկոր և մարմինէն
մարմին էր»: Բայց Եւա նաև Ադամի կինն էր,
անոր միացած այնպիսի յարաբերութեամբ մը,
որ «Երկուքը մէկ մարմին» կ'ընէր, Մատթ. ԺԺ
5, 6. այսպէսով Եւա կը դառնայ յստակ օրինակ
մը եկեղեցիին իբր Քրիստոսի հարսը, Բ. Կոր.
ԺԱ 2, 3:

(Շար.)

ՃԵՅՄՕ

ՀԸՏՍԸՆ ԹԵՅԼԸՐ

ՄԱՆԿԻԹԵԱՆ ՕՐԵՐԸ

Ճէյմըս Թէյլըր, երիտասարդ դեղագործը,
իրիկուն մը՝ խոր մտածութեան մէջ ընկղմած,
նստած էր կրակին առջեւ: Գործը յաջող եղած
էր այդ օրը: Վերջերս այնպէս պատահած էր որ
դրացիներէն ոմանք չէին կրցած վճարել այն
անհրաժեշտ առարկաներուն համար զոր իրմէ
գնած էին, սակայն Ճէյմս Թէյլըր քաջալերած
էր զանոնք իր շնորհալի խօսքերով՝ «Վնաս
չունի, այդ հաշիւը երկինք կը խրկենք, հոն
թող կարգադրուի»:

Անոր հայրը և մեծ հայրը ճան Վէսլիի բարե-
կարգութեան օրերուն՝ անոր գործակից քարո-
ղիչներ եղած էին: Ճէյմըս Թէյլըր ինք ալ իր
ապրած տեղին մէջ կը քարոզէր ու անոր առա-
տաձեռնութիւնն ու առեւտրական տաղանդը ալ
աւելի ազդեցիկ կ'ընէին իր քարոզութիւնը:

Սակայն առեւտրական գործի մասին չէր որ
երիտասարդ Ճէյմս Թէյլըր ամենէն աւելի կը
մտածէր այդ իրիկունը: Վերջապէս իր թիկնա-
թոռէն ելլելով կամացուկ մը մտաւ խոհանոցը՝
որուն պատերը կ'արձագանգէին այն քաղցր
եղանակները որ անգիտակցօրէն կը բղխէին
տան գործունէայ թագուհիին շրթներէն, որ իր
ամուսնութենէն առաջ Օր. Ամէլիա Հըտսըն
անունը կրած էր:

«Միբելի տիկինս, կրնա՞ս ինծի հետ քանի
մը վաղրկեան այս համարները կարդալ» հար-
ցուց քաղցրութեամբ երիտասարդ ամուսինը:

«Ուրախութեամբ, սիրելիս, ի՞նչ բնաբան է
որ կ'ուսումնասիրես», հարցուց անոր ընկերուհին
սիրափայլ աչքերով: Երկար ու լուրջ խօսակ-
ցութիւն մը ունեցան այն երջանկութեան շուրջ
զոր կ'ակնկալէին: Խորհրդակցեցան Ելից և
Թուոց գիրքերուն մէջ գտնուող այն համարնե-
րուն մասին որ կը խօսին առջինեկը Տէրոջը
նուիրելու նկատմամբ: Յետոյ ծունկի գալով
լըջօրէն աղօթեցին ու Աստուծոյ նուիրեցին այն
ամենէն ընտիր պարգեւը զոր երբեք կրնային
Աստուծմէ ակնկալել: Տէրն ալ անոնց հաւատքը
յարգելով՝ անոնց զգալ տուաւ թէ իրենց զոհը
ընդունուած էր ու իր գործին յառաջացման
համար պիտի գործածուէր ապագային:

Այսպէս 24 Մայիս 1832ին՝ իբրեւ բարեբաղդ
ժառանգորդ երեք Աստուածասէր նախահայրե-
րու՝ մանկիկ մը երեւցաւ Ճէյմս և Ամէլիա
Թէյլըրի բնակարանին մէջ որ կը գտնուէր
Անգլիոյ Պարնսլի, Եորքշիր կոչուած վայրին
մէջ: Անիկա իր հօր ու մօր անուններով Ճէյմս
Հըտսն Թէյլըր կոչուեցաւ: Այս մանուկին կեանքն
է ահա որ համառօտ կերպով պիտի նկարագրենք
այս գրքոյկին մէջ:

Մանկիկը սրամիտ ու շատ քաղցրիկ էր:
Որ եւ է ծնողք անկէ աւելի սրամիտ ու անուշիկ
մանկիկի մը չէր կրնար ցանկալ: Սակայն շատ
չանցած տեսան թէ անոր առողջութիւնը խիստ
փափուկ էր: Ասիկա կը դժուարացնէր անոր
կրթութեանը գործը: Ի՞նչպէս պիտի կրնային
անոր հնազանդութիւնն ու անձնագաղտմ սոր-
վեցնել: Բայց անոր հայրն ու մայրը դիտէին թէ
իրենց որդւոյն մեծ անիրաւութիւն ըրած պիտի
ըլլային եթէ զայն անկիրթ մեծցնէին: Ուրեմն
որոշեցին ուս ուսի՝ օրէ օր Աստուծմէ իմաստու-
թիւն խնդրել իրենց զաւակին կրթութեան հա-
մար:

Կեանքի առաջին տպաւորութիւնը՝ զոր Հըտ-
սըն Թէյլըր կը յիշէր, երկուքուկէս տարեկան
եղած ժամանակէն էր: Երբ մասնաւորապէս բարի
գտնուէր Փինֆիլտ Հիլի եկեղեցիին մէջ՝ վերջին
օրհնութենէն անմիջապէս յետոյ՝ իրենց նստա-
րանին վրայէն մեծ հօրը կ'երկարցուէր, որ միշտ
սովոր էր իրենց ետեւի նստարանին վրայ նստիլ:
Այսպէս նստարանէ նստարան փոխադրուիլն ու
իր մեծ հօրը տաքուկ գիրկը այնպէս տպաւո-
րած էին իր մէջ բարի վարքի մը գիտակցու-
թիւնը՝ որ երբեք չէր մոռնար: Երբ չորս տարե-
կան էր՝ ջանաց գիրք մը գրել 80 տարեկան
ամբարիշտ մարդու մը վրայ: Տարիներ վերջը
այդ մասին խօսելով կ'ըսէ՝ «Միայն մէկ գլուխ

լմնացուցի, տպագրական խոշոր գիրերով ու շատ աշխատութեամբ գրուած, բայց շատ երկայն չէր»: Երբեք չէր մոռնար նաեւ թէ ինչպէս իր փոքրիկ քրոջը՝ Ամէլիայի քալել սորվեցուցած ու իր եղբորը հետ «ժողով» խաղցած էր, որ ատեն իրենցմէ մէկը քարոզիչ ու միւսը ժողովուրդ կ'ըլլար: Կը յիշէր նաեւ երկու պղտիկ եղբայրներու մահը ու իր խօսքը՝ «Երբ մեծնամ ու մարդ ըլլամ, իմ նպատակն է միսիոնար մ'ըլլալ ու Զինաստան երթալ»:

Եղբայրներուն մեռնելէն վերջը տանը միակ մանչը մնաց ու մասնաւորապէս ընկերացաւ իր քրոջը՝ Ամէլիայի որ իրեն աւելի տարեկից էր: Փոքրիկ Լուիզը բաւական պղտիկ էր: Հըտսըն բնականէն կեանքի մասին թեթեւ չէր մտածեր ու լուրջ տղայ մըն էր: Սակայն ուրախ ու գուարթ էր ու տղայական հաճոյքներ կը սիրէր: Գրեթէ չկար բան մը որ իր աչքերէն վրիպէր: Խիստ զիւրահաճ էր: Բնութեան մէջ գտնուած ամեն ինչ հաճոյք կը պատճառէր իրեն: Համակիր ու համբերող էր. ընդունակ դիտելու և նոր ու հետաքրքրական ճշմարտութիւններ գտնելու: Փոքրիկ ծաղիկներ ու տունկեր անտառէն սուր բերելով զանոնք մշակելը ու թռչուններու, մըջիւններու և ուրիշ կենդանիներու սովորութիւնները ուսումնասիրելը իրեն համար մեծ հրապոյր ունէին որ տարուէ տարի կ'աւելնար:

Տէր և Տիկին Թէյլըր իրենց զաւակներուն դրամի արժէքը սորվեցնելու համար միմիայն աշխատանքի փոխարէն անոնց ձեռքը մի քանի բէնի կը դնէին: Իրենց կարողութեան համաձայն պարզ ու փոքրիկ գործերով դրամ կը շինէին: Օր մը Հըտսըն՝ մեծ աշխատանքով լման բէնի մը շահելէն վերջ իմացաւ թէ իրենց բնակած տեղին մէջ տօնավաճառ մը տեղի պիտի ոռնենար: Հրաման ստացաւ տօնավաճառի երթալու: Ամեն բանէ աւելի հրապուրուեցաւ լեցուած թռչուններու և կենդանիներու հաւաքածոյէ մը: Յնձութեամբ բլրակն ի վեր մազլեցեցաւ ու վազելով իր երազած թռչուններն ու կենդանիները փնտռեց: Սակայն մեծ յուսախաբուութեամբ տեսաւ թէ անոնք ցանկով շրջապատուած էին ու դրան քով կեցած էր երկայնահասակ մարդ մը որ պղտիկ տղայոց խոժոռ կը նայէր: Հակառակ ասոր Հըտսըն իր բէնին անոր ցուցնելով ներս մտնելու արտօնութիւն խնդրեց: Մեծ եղաւ իր զարմանքը՝ երբ մարդը մերժեց ըսելով թէ մոտքը երկու բէնի էր: «Ուրիշ բէնի չունիմ» ըսաւ քաշուելով. «Բայց եթէ զիս ներս մտցնես, այս բէնին քեզի կուտամ. քեզի համար աղէկ

չէ՞ դոնէ մէկ բէնի մը ունենալ՝ քան երբեք չունենալ»: Համազգեստ կրող երկայնահասակ մարդուն գաղափարը կը տարբերէր: Հըտսըն թէպէտեւ յարատեւութեամբ իր տեսակէտը տրամաբանել ջանաց, սակայն անոր բոլոր ջանքերը պարապ ելան մարդը չը թողուց որ այն թանկագին ու հրաշալի գանձերը տեսնէր: Խեղճ, զգայնիկ Հըտսըն լալով տուն վազեց: Այնպէս կ'արտասուէր որ կարծես թէ սիրտը կտոր, կտոր պիտի ըլլար: Ինչպէս միշտ՝ նոյնպէս ալ այս անգամին մայրիկը հասկցաւ իր ամբողջ նեղութիւնը: Զայն իր բազկաց մէջ առնելով ու անոր խառնուած մազը շտկելով ըսաւ թէ համազգեստաւոր մարդը իր պարտականութիւնը միայն կատարած էր, ոչ մէկը կրնար երկու բէնիէն պակասով տեսնել այն սիրուն թռչուններն ու կենդանիները: Յետոյ յարեց՝ «Այս վերջերս այնքան բարի ու գործունեայ էիր դուն որ հիմա քեզի բէնի մըն ալ կուտամ իբրեւ վարձատրութիւն: Վազէ՛, նորէն գնա, մարդը ուրախութեամբ պիտի թողու որ փափաքածդ տեսնես: Պարագայի այս անակնկալ փոփոխութիւնը ամեն ինչ կարգի դրաւ ու Հըտսընի փոքրիկ սիրտը այնպիսի ուրախութեամբ մը լեցուց որ եօթանասուն տարի վերջն իսկ հրճուանքով կը յիշէր այս դէպքը:

Տէր և Տիկին Թէյլըր կ'աշխատէին իրենց զաւակներուն միտքերուն մէջ տպաւորել թէ՛ ձեռքերու և կօշիկներու մաքրութիւնը ու եղունգներու և հագուստներու խնամքը նոյնքան հարկաւոր էին տան մէջը որքան օտարներու ներկայութեան: Կ'ակնկալուէր որ փոքրիկները ամեն բանի մէջ ճշգրիտ գտնուէին ու յարգանք ունենային իրենց պղտիկ անձնաւորութիւններուն հանդէպ: Հըտսընի հայրը կը մտածէր թէ իր զաւակներուն երջանկութիւնն ու հաճոյքները, անոնց վրայ շոտյուլուած խնամքն ու անոնց ցոյց տուած հնազանդութիւնը բաւական չէին: Անհրաժեշտ էր որ անոնք իրենց առօրեայ պարտականութիւնները ճշգրիտ կատարելով՝ ընտիր ունակութեանց տիրանային՝ որպէսզի ապագային վստահելի այրեր ու կիներ ըլլային: Երբեք չէր թուլատրեր որ ճաշի կամ որ և է ուրիշ ժամադրութեան առթիւ ուշ մնային: Կ'ըսէր՝ «Եթէ հինգ հոգի են սպասողները և անոնք մէկ մէկ ըսպէս սպասելու ստիպուին, հինգ ըսպէ կը կորսուի: Հինգ թանկագին ըսպէներ որ անգամ մըն ալ չեն վերադառնար:

Պրն. Թէյլըր մեծ հարստութիւն կամ աշխարհային առաւելութիւններ չէր կրնար թողուլ իր

զաւակներուն, սակայն կրնար անոնց իր հաւատփին նման պարզ ու զօրաւոր հաւատք մը ներշնչել, և այնպէս ալ ըրաւ: Անոնց սորվեցուց Աստուածաշունչը իբրեւ Աստուծոյ խօսքը յարգել ու անոր մէջ գտնուած ամէն մէկ խոստումին կատարելապէս վստահիլ:

Հըտսընի առողջութիւնը այնքան փափուկ էր որ չէր կրնար դպրոց ղրկուիլ, սակայն անոր տան մէջ ստացած կրթութիւնը աւելի գերազանց էր: Ոչ թէ միայն կանոնաւոր դասընթացքի մը հետեւելով անոր միտքը զարգացաւ, այլ իր ծնողաց ու հիւրերու միջեւ կատարուած խօսակցութեանց ունկնդրելով՝ անոր մէջ այնպիսի խորհուրդներ ու նպատակներ արթնցան, որոնց անձանթ են դպրոց յաճախողներ ընդհանրապէս: Տարուէ տարի իր առջեւ ապրող հօր առօրեայ տիպար կեանքը որ և է կերպով չտկարացուց իր ընդունած տպաւորութիւնները:


Տէր և Տիկին Թէյլըր խիստ հիւրասէր ըլլալով յաճախ օտարներ կը հիւրասիրէին: Անոնց հիւրերը ընդհանրապէս հոգեւոր պաշտօնեաներ էին, որ Փինֆիլտ Հիլի ժողովներուն կուգային: Այսպիսի պարագաներու էր որ Միսիոնարութեան շուրջ խօսակցութիւններ տեղի կ'ունենային ու փոքրիկները հաճոյքով կ'ունկնդրէին հեռաւոր երկիրներէ եկող շատ մը պատմութիւններու: Զինաստան առաջին տեղ կը բռնէր Պրն. Թէյլըրի սրտին մէջ և կը ցաւէր որ իր եկեղեցին բան մը չէր ըներ Աւետարանը Զինաստանի մէջ տարածելու համար: Թէպէտեւ Վէյսլիի մեծ արթնութեան 100 տարի անցած էր ու անոր հետեւորդներուն կողմէն անոր 100 ամեայ Յոբելիանը կը տօնուէր, թէպէտեւ մեծ գումարներ ունէին իրենց տրամադրութեան տակ ու աշխարհի ամէն կողմը աղօթքի ժողովներ հաստատելով հոգեւոր օրհնութիւնները կը բազմապատկուէին ու հայրենիքի եւ հեռաւոր երկիրներու համար նոր նոր գործունէութիւններ կը թելադրուէին, սակայն Զինաստանի համար որ եւ է կարգադրութիւն չէր ըլլար:

Զինաստանի առաջին բողոքական միսիոնարը Բապըրթ Մարիսըն, 5 տարի առաջ մեռած էր ու անոր յաջորդող մը եղած չէր տակաւին: Փոքրիկներուն Զինաստանի մասին ունեցած հետաքրքրութիւնը աւելցաւ «Զինաստան» վերնագրով գրքոյկի մը միջոցով, զոր կրկին ու կրկին կարդալէն գրեթէ գոց ըրին: Հըտսըն, որ այս պարագային 7 տարեկան էր միայն՝ կարծես արդէն որոշած էր Զինաստան երթալ: Անոր

քոյրը Ամէլիա ալ պատրաստուեցաւ անոր ընկերանալու: Ծնողքը կը նշմարէին փոքրիկներուն նպատակը: Թէպէտեւ անոնց բաղձանքն եղած էր որ Հըտսըն ճիշդ այս կարգի պաշտօնի մը կանչուէր, սակայն անոր շարունակական վատառողջութիւնը աստիճանաբար հեռացուցած էր այս յոյսը իրենց սիրտերէն: Այսու ամենայնիւ այնպէս կը թուէր թէ Սուրբ Հոգին կը գործէր անոր մանուկ սրտին մէջ: Յաճախ իր հօրը հետ գիւղերու եկեղեցիները կ'այցելէր Կիրակի օրերը: Կարծես անոր առաջնորդած ժողովներուն հոգին կը հասկնար ու իր հօրը հետ կը կրէր անոնց բեռը: Սակայն Հըտսընի ուրիշներու բարեւաւորութեան շուրջ տածած հոգը այս կարգի կրօնական ժողովներէ կախում չունէր, այլ իր ծնողաց սովորական խօսակցութեանց ու ընտանեկան կեանքի մէջ ձգուած ազդեցութեան միջոցներով վառ կը պահուէր: Անոնք ոչ թէ զապաւարական մը միայն ունէին իրենց աչքերուն առջեւ, այլ իրապէս Աստուծոյ համար ապրիլ իրենց կեանքին առաջին ու ամենէն կարեւոր խնդիրն ըրած էին: Սակայն հեռու էին կրօնական ամէն ծայրայեղութենէ: Հաճոյքի ու զբօսանքի ժամանակ կուտային իրենց զաւակներուն: Պրն. Թէյլըր յաճախ պտոյտի կ'եւէր իր զաւակներուն հետ Կիրակի օրերը կէս օրէ վերջ: Երկար ժամանակ կը քալէին բացօդեայ տեղերէ: Կը սիրէին թռչունները, թիթեռնիկներն ու ծաղիկները և մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէին իրենց հօր անոնց մասին պատմածներուն: Բաժանորդ էին նաեւ բնական գիտութեանց վերաբերեալ ամսաթերթի մը, որ ամիսէ ամիս ուսումնասիրելով իրենց հետաքրքրութիւնը կը յագեցնէին ու կը զարգանային: Իրենց հօր դեղարանէն դեղի պարապ տուփեր կ'առնէին, օդի համար պզտիկ ծակեր կը ծակէին անոնց մէջ ու միջատներ և թիթեռնիկներ հաւաքելով տուն կը բերէին, և քանի որ իրենց ծնողքէն սորված էին թէ որ եւ է կենդանի արարած չարչարելու չէին, քիչ մը քօրօֆօրմով զանոնք շնչահեղձ ընելով՝ կը պահէին:

Ուրիշ երջանիկ պարագայ մըն էր Ծննդեան տօնը: Երբ ամբողջ ընտանիքով կը հաւաքուէին իրենց մեծ մօրը տունը, ուր կ'ըլլային նաեւ հօրաքոյրեր ու մօրաքոյրեր իրենց զաւակներով: Հոն կը վայելէին իրենց մեծ մօր համեղ կերակուրները ու ազատ էին ամբողջ տան մէջ պահուումը խաղալու:

Թարգմ. Ն. Մ.



ՉԿԱՅ ԲԱՆ ՄԸ ՈՐ ՊԻՏԻ ՉՅԱՅՏՆՈՒԻ

Տասնըջորս տարեկան էի: Տօնի օր մը մեր գիւղին մօտիկ մեծ զօրանցք մը տեղի պիտի ունենար: Աստուծոյ կանուխ ելած էի, որպէսզի ազարակը գործս շուտ լմնցնեմ, որմէ յետոյ ինքզինքս ազատ կը կարծէի վազել զօրանցքին երթալու, երբ հայրս զիս կանչեց, տոպրակ մը լեցուն բակլայ տուաւ որ տնկեմ:

Շատ դժգոհ սրտով գացի այս գործին: Բայց ահա հեռուէն երաժշտութեան ձայնը կուգար և ամէն մարդ այն կողմ կը վազէր: Այդ վայրկեանին կը փափաքէի որ աշխարհի մէջ բնաւ բակլայ գոյութիւն ունեցած չըլլար: Յանկարծ տոպրակս առի, և արտին մինչեւ վարի ծայրը իջայ, ուր մեծ քար մը կար: Քարը վերցուցի, փոս մը փորեցի, բակլաներուս ամբողջը հոն նետեցի, յետոյ քարը իր տեղը դնելով մէկ ոստումով արգէն դուրս ցատկելով վազեցի գինուորները դիտելու և բարեկամներս գտնելու: Շատ չկրցի գուարճանալ, սիրտս անհանգիստ էր, ամբողջ օրը միտքս էին բակլաները, կը մտածէի թէ ինչ պատասխան պիտի տայի հայրիկիս: Տուն դառնալու անիկա հարցուց թէ բակլաները տնկած էի: «Այո», պատասխանեցի, ամէն ալ հողին մէջ դրի: Ինչ ալ ըլլայ՝ խօսածս սուտ էր, բայց հայրս չկասկածեցաւ: Այսու ամենայնիւ օրերը և շաբաթները անցան և օր մը հայրս ինծի ըսաւ. «զարմանալի է որ բակլաները չեն բուսնիր. դուն զանոնք տնկեցիր, այնպէս չէ»:

— «Այո հայրիկ»:

— «Կ'երեւի թէ գէշ տեսակէն էին», ըսաւ հայրս և խնդրը փակեց:

Ես կը խորհէի թէ այս անգամ ամէն ինչ վերջացաւ և այլեւս բակլաներուն խօսքը պիտի չըլլար: Բայց ժամանակ մը յետոյ, արտին ծայրէն անցնելով հայրս տեսած էր ամբողջ շրջանակ մը բակլայի ընտիր տունկերու, որ քարին շուրջը բուսած էին: Այդ վայրկեանին բան մը չըսաւ, բայց իրիկունս ճաշին վրայ յանկարծ

ինծի հայցուց. «Դուն բակլաները ցորենի շաքերուն մէջ տնկեցիր, այնպէս չէ»: Այս անգամ բոնուեցայ, կարմրելով և լալով ամէն բան խոստովանեցայ և ներողութիւն խնդրեցի: Հայրս ներեց և մոռցաւ այդ յանցանքս: Բայց ես բնաւ չմոռցայ այդ բակլաները, զորոնք լաւ մը պահած ըլլալ կը կարծէի և սակայն բուսած էին:

Այսպէս է ամէն յանցանք և մեղք: Աստուած կ'ըսէ, «Դիտեցք որ ձեր մեղքը ձեզ պիտի գտնէ», թո. ԼԲ 23, որքան ալ խնամքով ծածկէք ու պահէք զայն:

Քու մեղքդ արդէն ճիմա քեզ կը գտնէ: Քու խիղճդ քեզ կը յանդիմանէ: Նիւթեր կան որոնց մասին դուն լսել չես ուզեր, և քեզ կը նեղեն: Դուն կ'ուզես խղճիդ ձայնը խեղդել, բայց և այնպէս անիկա կը շարունակէ խօսիլ: Դուն կրնաս ուրիշները խաբել, բայց ոչ ինքզինքդ: «Բան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտնուի, և զաղտուկ որ պիտի չգիտցուի» կ'ըսէ Աստուծոյ խօսքը ու նաև «Չկայ արարած մը Անոր դիմաց չերեցած, հապա ամէն բան բաց ու յայտնի է Անոր աչքերուն առջեւ, որու պիտի տրուի մեր հաշիւները» Երբ. Դ 13:

Քու մեղքդ քեզ պիտի գտնէ մահուան ժա. մուն: Մարդիկ կան որ կրնան թերեւս իրենց մեղքերը քողարկել ամբողջ իրենց կեանքի ընթացքին, կրնան իրենց խիղճը բոնութեամբ լոցնել, բայց մահը բոլոր դիմակները պիտի վերցնէ և յաւիտենականութեան առջեւ Աստուծոյ Աթոռին առջեւ, քու մեղքերդ պիտի գան քեզ ամբաստանելու:

Քու մեղքդ քեզ պիտի գտնէ դատաստանին օրը: Այդ օրը քու խիղճդ քեզ պիտի դատապարտէ և չկայ մէկը որ քեզ այնքան իրաւաբար և այնքան խստօրէն դատէ քան քու խիղճդ:

Քու մեղքդ քեզ պիտի գտնէ դժոխքին մէջ: Քանի մը օր առաջ բանտարկեալ մը իր ամօթալի կեանքին վերջ տալու համար ինքզինքը սպաննեց: Բայց դուն այս միջոցին անգամ չես կրնար դիմել, քու խղճիդ ազադակէն փախչելու համար: Առանց դադարի, այն սարսափելի անցեալը հոն քու առջեւ պիտի ըլլայ, և կարող պիտի չըլլաս քու աչքերդ անկէ դարձնել: Առանց դադարի դուն պիտի տեսնես բոլոր այն շնորհքի պարագաները, որ փախցուցիր, բոլոր խրատները և կոչերը, որոնց առջեւ անհող և խուլ մնացիր, բոլոր այն մեղքերը որ գործեցիր: Ահաւասիկ դժոխքը, անիկա բեռնաւորուած խիղճ մըն է, որուն ձայնը այլեւս ոչ մէկ բան կրնա

խեղդել: Այլեւս տօն օրեր չկան, հաճոյքներ չկան քեզ զբաղեցնելու, այլեւս չկայ բան մը որ կրնայ զայն մէկ վայրկեան լռեցնել, չկայ որ եւ միջոց մը որ կրնայ քեզի քու մեղքերդ մոռցնել տալ: Հակառակ ամէն բանի, քու խիղճդ յաւիտեան քեզ պիտի յանդիմանէ քու մեղքերովդ և քեզ պիտի չարչարէ:

Միայն մէկ տեղ կայ, ուր քու մեղքերդ քեզ պիտի չզտնեն և քեզ պիտի չյանդիմանեն. անիկա Յիսուս Քրիստոսի խաչին ոտքն է: Հիմա հոն եկուր և յաւիտեան ազատուած ու ապահով պիտի ըլլաս:



ՄԱՆԿԱՆՑ

ԱՍՏՈՒՄՈՅ ԿԵՐՊԵՐԸ

Հետեւեալը պատմութիւն մըն է որ կը ցուցնէ թէ Աստուած յաճախ ի՞նչ զարմանալի կերպերով կը պատասխանէ Իրեն եղած աղօթքներուն:

Տարիներ առաջ Ժընէվի մէջ կ'ապրէր որբեւարի կին մը իր աղջկան հետ: Իրենց ապրուստի միջոցն էր համեստ խանութ մը, որ փոքրիկ եկամուտ մը հազիւ կ'ապահովէր:

Քանի մը շաբաթէն նոր Տարի էր, և այդ օրերուն ընդհանրապէս ամենէն շատ առեւտուր կ'ըլլար. բայց այս տարի ամենուն կողմէ նոյն զանգատը կը լսուէր. «Գործ չկայ. ապրանք չի ծախուիր»:

Տարուան առաջին օրերուն մեր որբեւարին մուրհակ մը վճարելու էր, և պէտք եղած դրամը ճարելու համար յոյսը դրած էր այդ օրերու յաւելուածական շահին վրայ: Արդ, առուծախը շատ վատ եղած էր և այժմ 100 ֆրանք կը պակսէր տակաւին պէտք եղած գումարը լրացնելու: Ի՞նչ պէտք էր ընել: Պարտք ընել: Ինք որ խոստացած էր, ամուսնոյն մահուան ատեն, որ եւ ատեն պարտք չընել: Ո՛չ, մինչեւ վերջին վայրկեանը պիտի ջանար փոխ դրամ չստանալ: Միեւնոյն ժամանակ կինը գնաց և իր պարտքը ցուցնող թուղթը իր Աստու-

ծոյն առջեւ բացաւ և սկսաւ աղօթել ու թախանձել: Ան կ'իշնէր վար խանութը, ու դարձեալ ելլելով կը սկսէր խնդրել. «Ո՛վ Տէր, Դու հարուստ ես խորհուրդներով, զօրաւոր ես միջոցներով ու կերպերով, կը հաճի՞ս ինծի գտնել տալ այս 100 ֆրանքը»: Կ'աղօթէր առանձին, կ'աղօթէր աղջկան հետ, ազգական մըն ալ եկաւ միացաւ, և այսպէս անցաւ Դեկտեմբեր 31ի ամբողջ օրը:

Իրիկուան մօտ բարեսիրտ ազգականը նորէն եկաւ. «Քիչ մը դուրս ելլենք, ըսաւ. աչքերդ կարմրած են լալէն, մաքուր օդ առ, գոնէ դիշերը կրնաս քնանալ»: Որբեւարին քաջութիւն չունէր դուրս ելլելու, բայց իր աղջկան սիրոյն՝ ընդունեց: Քիչ վերջ փողոցին ամենէն խոնուած մասին մէջ աղջկան ոտքը առարկայի մը կը դպնար: Աղջիկը իր առջեւ նայեցաւ և ո՛վ զարմանք, ժամացոյց մըն էր, բոլորովին նոր ու մեծարժէք, իր ոսկի շղթայով: Յուզումէն դողալով, ան զգաց թէ իրենց աղօթքին պատասխանն էր այդ, և աճապարանքով տուն տարաւ գտածը: Նոյն ժամուն ի՞նչ տեղի կ'ունենար քաղաքին հարուստ թաղամասին մէկ բնակարանին մէջ: Երիտասարդ կին մը շղային շարժուածքով ծանուցում մը կը գրէր իր թերթին համար: Ամուսինը ներս մտաւ. «Բարեկամս, երեւակայէ... ինծի նուիրած գեղեցիկ ժամացոյցը, շղթայովը միասին...» ու ամուսնոյն երկարեց գրած թուղթը. «Կորսուած է, ժամացոյց մը (նկարագրուած) 50 ֆրանք նուէր՝ բերողին. դիմել հետեւեալ հասցէին...»: «Չեմ կրնար հասկնալ թէ ինչպէ՞ս կորսուեցաւ, գողցա՞ն արդեօք, ճամբա՞ն ինկաւ, այն ատեն անկարելի է որ ոտքի տակ ճգմուած չըլլայ: Տուն հասնելէս վերջ իմացայ, և կը տեսնես, 50 ֆրանք խոստացայ վերադարձնողին: Եթէ Աստուած ուզէ, կրնանք գտնել...»:

— Յիսուն ֆրանք քիչ է, հարիւր գրէ, և պիտի չզղջաս, ժամացոյցդ բերող ազնիւ մարդը ատոր արժանի է. նոր տարուան նուէր մըն ալ ըրած կ'ըլլաս և ատիկա պիտի չմոռցուի:

Հասկցար անշուշտ, սիրելի ընթերցող, որ այդ ժամացոյցը միջոց մըն էր միայն զոր Աստուած ընտրեց որբեւարին աղօթքին պատասխանելու համար: Տէրը կը լսէ Իրեն եղած խնդրուածքները և իր կամքին համեմատ կը պատասխանէ: Իր կերպերը զարմանալի չեն: Կը կարծէ՞ք թէ առարկան կորսնցնողը փասեց: Տէրը մէկը տխրեցնելով չէ՛ որ միւսը կ'ուրախացնէ: Այդ բանուկ փողոցին թոհուրոհին մէջ թանկագին

գոհարեղէնը ուրիշներու աչքէն և ոտքերէն պահեց Աստուած, ու ան չփնասուեցաւ նոյնիսկ:

Տրուած ծանուցումը յաջորդ օրուան համար չկրցան հասցնել, վաղայաջորդ օրն ալ թերթ լոյս չտեսաւ, ամանորին աշխատանքի չգոյութեան պատճառով: Ի՞նչ մեծ յուզումով էր որ, Յունուար 3ի առաւօտուն, մայր ու աղջիկ բացին դրացիէ մը փոխ առնուած օրաթերթը, ծնրադիր աղօթելէ վերջ: Չորրորդ էջին վրայ կարդացին մեծ գիրերով գրուած ծանուցումը, «Կորսուած է ժամացոյց մը...» եւայլն, և նոյնքան խոշոր տառերով «100 ֆրանք վարձատրութիւն»:

Հարիւր ֆրանք: Անոնց աչքերը արցունքով լեցուեցան և շնորհակալութեան ու օրհնութեան բառերը իրենց վեր ուղղուած նայուածքով արտայայտեցին այն հաւատարիմ երկնաւոր Բարեկամին, որուն առջեւ խօսք չէին կրնար գտնել իրենց երախտագէտ յուզումէն:

Թարգմ. Յ. Բ.

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

ԲԱՆԲԵՐ

Նոր Տարուան առթիւ
իր սրտագին մաղթանքները կը ղրկէ
իր սիրելի ընտանիքի իւրաքանչիւր
անդամին:

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ. — Շնորհակալութիւն այս անցեալ ամսուան մէջ հասած նամակներուն և ղրկուած նոր բաժանորդներուն համար: Ուրախ ենք որ մեր խոստացած պզտիկ մրցանակները կը քաջալերեն ընթերցողները: Դիտենք սակայն թէ ասոր ղրգիչ պատճառը ո՞չ թէ Ս. Դրական համար մը կամ գիրք մըն է, այլ աւելի եւս փափաքը, որպէսզի ուրիշներն ալ «Բանբեր»էն օգտուին: Մենք ալ մեր կողմէն շատ սիրով պատրաստ ենք գիրքնք պզտիկ նուէրով մը քաջալերելու: Ուրեմն նոր բաժանորդներ գտնենք: «Բանբեր»ը տարածենք:

ԼՈՒՐԵՐ ՄԻՋԱԳԵՏՔԷՆ. — Մեր Միսիոնար Սամուէլ եղբայր Պաղգալիան քանի մը շաբաթ Պէյրութ և Հալէպ անցնելէ և շատ մը բարեկամներու ու եկեղեցիներու հետ շփման զալէ յետոյ անցած է դէպի Միջագետք, ուր Տէր Զօրէն սկսեալ մինչեւ Հասիչէ քրդախօս գիւղեր այցելելով, հասած է Տէրբզ մեր ծերունագարդ եղբոր Ղազար Տէր Ղազարեանի և Արամ եղբոր հետ և այնպէս կ'երեւի թէ այս ձմեռը հոն պիտի մնան, Աւետարանի զործը շարունակելու և ընդլայնելու սոյն շրջանակին մէջ: Աղօթենք մեր եղբայրներուն համար:

ՀՐԴԵՂ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ. — Անցեալ շաբաթներուն մէջ շատ սիրելիներէ շատ նամակներ ընդունեցինք, որոնք մեզի հարցուցին Մարսէյի հրդեհի մասին: Անոնք որ Մարսէյ գտնուած են և լաւ դիտեն Nouvelles Galeriesի դիրքը և մեր մօտաւորութիւնը սոյն վաճառատան. կը հարցնեն թէ ի՞նչ եղանք մենք, արդեօք հրդեհը մեզի փնաս մը չտուա՞ւ:

Նախ շնորհակալութիւն յայտնելով այս եռանդուն հետաքրքրութեան և սրտցաւ մասնակցութեան համար, կ'ուզենք պատասխանել ամենուն ալ թէ՛ իրաւ հրդեհը ահռելի էր և մեզի շատ մօտ, սակայն Տէրը Իր պահպանող ձեռքը երկնցուց և հրդեհը Rue Papère փողոցին մինչեւ 3 թիւ առաստաղին առջեւ կանգնեցուց, այնպէս որ մենք անփնա մնացինք: Միայն երկու օր տունէն դուրս մնալէ յետոյ կրցանք կրկին մեր բնակութիւնը հաստատել: Փառք Տէրոջը: Սաղմ: Լ. Դ. 6, 7:

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ. — «Բանբեր» նուիրենք չունեցողներու և չկրնալ վճարողներու, նոյնպէս մեր սիրելի գինուորներուն:

Անցեալ տարի այսպիսիներ 30 հատ էին, որոնց «Բանբեր» ղրկելու համար, եղբայրներ և քոյրեր աջակցած են: Այս տարի 50 հատ ունինք, ջանանք ամենուն ալ ղրկել: Նուէր մը ըրէ անձանթի մըն ալ: «Բանբեր»ը ուրախութիւն պիտի առթէ անոր:



Խմբագրութիւնս իր բաժինը արդէն կը կատարէ հարկ եղած գոհողութիւններն ընելով:

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

ԵՐԶԱՆԻ 4 ԱՊԱԳԱՅ

Գերմաներէնէ՝ Յ. Ն. Դ.



- 1 Թող բացուին սուրբ դռներն կեանքի ապագայ,
Լոյս ձգեն այս խեղճ կեանքին վրայ,
Որ կանգնին ծունգեր յոգնած մեր՝
Հաստատուին սրտեր:
- 2 Հոս միշտ ջանք առաւունջ մինչեւ իրիկուն.
Մեր աչքեր մատնեն անձկութիւն
Մեր սրտեր սարսփին խիստ ցուրտէ,
Ձի բիրտ հալի փչէ:
- 3 Տէր Յիսուս, Դուն միայն յուսոյ մեր աղբիւր՝
Արթնցուր մեր մէջ տեսիլք դիւր,
Արօտիտ եւ թարմ ջուրերուդ,
Եւ խոստումներուդ:
- 4 Թող այն սուրբ կեանքն անվերջ, լոյս ձագէ մեր վրայ,
Որ պզտիկ բանն դեռ պըզտիկնայ:
Եւ մեծ բանն ալ մեծ երեւնայ
Սիրո՛ւն ապագայ:

ՈՍԿԵՂԷՆ ԿԱՆՈՆԻ ԿԻՐԱԿԻՆ.— Հայ ազգին
մէջ աշխատող բոլոր Միսիոնները իրենց երկիր-
ներուն մէջ Ոսկեղէն կանոնի օրը ըստ սովորու-
թեան Դեկտեմբերի առաջին Կիրակին ըրին,
Մենք ալ նոյն օրը եկեղեցիով հաւաքոյթ ըրինք
մեր ազգակիցներուն համար: Անոնք որ դեռ
իրենց բաժինը բերած չեն այս բարի զործին,
դեռ պատեհութիւն ունին տալու իրենց գտնուած
տեղւոյն հովիւին կամ «Բանբեր»ի միջոցաւ:



ՀՈԳ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԵՅԼԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ա. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ԵՆ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Քաղաք. 2, rue Philippe-de-Girard
Քարոզածողով. ժամը 10ին
Աղօթածողով. ժամը 11.30ին

Ս. ԺԻԻԼԻԷՆ. 55, boulevard de la Figoné
Առետարանչական ժողով ժամը 16ին

ՍԷՆ ԼՈՒԻ. 11, Impasse des Muriers
Սուրբ Գրական սերտողութիւն ժամը 10.30ին
Քարոզածողով ժամը 14.30ին

Ս. ԱՆԹՈՒԱՆ. 85, route Nationale
Առետարանչական ժողով ժամը 14.30ին

ՍԷՆ ԼՈՒ. 21, boulevard Escalon
Սուրբ Գրական սերտողութիւն ժամը 10.30ին
Քարոզածողով. ժամը 15.30ին

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ. Villa Seferի մեր սրահին մէջ
Առետարանչական ժողով ժամը 14ին

Առետարանչական ժողովներ

ԿԱՐՏԱՆ. Յակոբեան տան մէջ ժամը 14.30ին
ԼԱ ՍԻԹԹԱ. Ֆրանս. Առետ. եկեղեցւոյ սրահը ժամը 14.30ին
ԷՔՍ. Ֆրանս. Ե. Ք. Ը.ի սրահը ժամը 14ին

.....

բ. ՇԱՐԱԹԱՄԷՋԻ ԱՂՕԹԱԺՈՂՈՎՆԵՐ

Զորեքշաբթի — ՍԷՆ ԺԻԻԼԻԷՆ ժամը 14.30ին
ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ » 14.30ին
Քաղաք » 20ին
ՍԷՆ ԼՈՒ » 20ին
ՍԷՆ ԼՈՒԻ » 20ին
Հինգշաբթի — ՍԷՆ ԺԵՂՈՒՄ » 19ին
Ուրբաթ — ՍԷՆ ԱՆԹՈՒԱՆ » 14ին

.....

գ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ Ե. Ք. Ը.

Քաղաք. Երկուշաբթի ժամը 20ին
ՍԷՆ ԼՈՒ. Հինգշաբթի » 20ին

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ

ա. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

Քաղաքը	Ժամը	8.30ին
Ս. ԼՈՒ.	»	8.30ին
ԼԷՂ ՍԼԻՎ	»	9ին
Ս. ԼՈՒԻ	»	9ին
Ս. ՄԱՐԿՐԻԹ	»	9ին
Ս. ԱՆԹՈՒԱՆ	»	14.30ին
ՍԷՆ ԺԻԻԼԻԷՆ	»	14.30ին
Ս. ԺԵՂՈՒՄ	»	14.30ին
ՍԷՆ ՄԻԹՐ	»	14.30ին
ԱԿՍ	»	14.30ին

.....

բ. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Տեղի կունենան վերոյիշեալ տեղերու մէջ՝
շաբաթամէջի կէս օրէ վերջերը ժամը 4.30էն
սկսեալ եւ Հինգշաբթի ամբողջ օրը, ի բաց
առեալ կարտան, ՍԷՆ ՄԻԹՐ եւ ՍԷՆ ԺԵՂՈՒՄ:

Պաշտօնեաներ եւ անոնց հասցէները

ՎԷՐ. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ՕՐ. ԵՍԹԵՐ ՏԷՄԻՐՃԵԱՆ

ԿԻԻԼՇԱՆ ԵՂՔ. ՊԱՏԱՔԵԱՆ

7, rue Papère MARSEILLE (B.-du-Rh.)
(Téléphone Colbert 03-97)

Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ, 21, boul. Escalon
St-LOUP-MARSEILLE (B.-du-Rh.)

Պատ. ՎԷՔԻԼԵԱՆ, 11, Impasse des Muriers
St-LOUIS-MARSEILLE (B.-du-Rh.)

